



**Հրանտ Նազարյան**

ՀՀ ՍԴ անդամ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ  
ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ  
ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ**

Դատական իշխանության, որպես պետական իշխանության միասնական համակարգի կարևորագույն ճյուղերից մեկի, կազմակերպման եւ գործունեության սահմանադրաիրավական հիմունքների հարցն ուղղակիորեն շաղկապված է պետության ձեւի կամ պետական իշխանության կազմակերպման հիմունքների հարցի տեսաիրավական մեկնաբանման հետ:

Իհարկե, եթե պետական իշխանությունն իրականացվում է ժողովրդավարական հիմնական սկզբունքներով, ապա այդպիսի պետություններում, պարտադիր, չի ենթադրվում այդ իշխանության, եւ մասնավորապես՝ արդարադատության, իրականացման չափորոշիչների բացարձակ միասնականացում կամ միօրինակություն: Ընդհանուր առմամբ, դատական իշխանությունն իրավական պետությունում կոչված է, իր լիազորությունների շրջանակներում, լուծելու սոցիալական կարևորագույն խնդիրներ. ապահովելու մարդու իրավունքների եւ ազատությունների պաշտպանություն, իշխանությունների տարանջատման եւ սահմանադրական օրինականության սկզբունքների իրականացման երաշխավորում, պետական իշխանության անիրավաչափ կենտրոնացման կանխում, քաղաքական հակամարտություններում ուժի գործադրման բացառում, պետական ապարատի գործունեության օրինականության նկատմամբ վերահսկողության իրա-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 4(21)2001  
3

կանացում եւ այլն: Բացի այդ, իրավական, ժողովրդավարական պետության պայմաններում պետաիշխանական գործառույթները, ինչպես եւ արդարադատությունը, ընդհանուր եւ անհրաժեշտ գործառնական նշանակությանը զուգահեռ, ծառայում եւ միտված են նաեւ կոնկրետ այն նպատակների իրականացմանը, որպիսիք դրված են տվյալ պետության առջեւ, զարգացման տվյալ ժամանակահատվածում եւ օբյեկտիվորեն թելադրված են տվյալ հասարակության բնականոն զարգացման անհրաժեշտությամբ եւ առանձնահատկություններով: Սակայն, դատական իշխանության արդյունավետությունը մեծապես պայմանավորված է ոչ միայն ինստիտուցիոնալ խնդիրների հստակեցմամբ, այլեւ դատարանների կողմից դրանք լուծելու սահմանադրաիրավական անհրաժեշտ եւ երաշխավորված պայմանների առկայությամբ՝ հաշվի առնելով նաեւ պետական իշխանության օրենսդիր եւ գործադիր մարմինների կողմից դատական համակարգի նկատմամբ օբյեկտիվորեն ունեցած հնարավոր ներազդեցության պոտենցիան ցանկացած պետության պայմաններում:

Իսկ ինչո՞վ է պայմանավորված արդարադատության արդյունավետության ապահովման պայմանների հատկապես սահմանադրաիրավական ամրագրման անհրաժեշտությունը: Մեր կարծիքով, *նախ*, դատական իշխանությունը տարանջատելու եւ պետական իշխանության ինստիտուցիոնալ համակարգում այդ իշխանության անկախ եւ անկողմնակալ գործադրման երաշխավորվածությունը՝ տվյալ պետության բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտով, ապահովելու նպատակով, *երկրորդ*, պետական իշխանության ողջ համակարգի (այդ թվում՝ դատական) ինստիտուցիոնալ գործունեությունը միասնական՝ սահմանադրական օրինականության, սկզբունքով կառուցելու անհրաժեշտությամբ, *երրորդ*, պետական իշխանության միասնական համակարգում, դատական իշխանության, որպես պետության սոցիալական կարեւորագույն գործառույթներ իրականացնող ինստիտուտի, կայուն հարատւությունը, ինչպես նաեւ՝ արդարադատության անդառնալիությունը, ապահովելու նպատակով, *չորրորդ*, «զսպումների եւ հակակշիռների» համակարգի գործադրման անխախտելիությունն երաշխավորելու նպատակով:

Այսպիսով, եթե ընդհանրացնենք, ապա դատական իշխանության կազմակերպման սահմանադրաիրավական հիմնական սկզբունքների երաշխավորմամբ եւ գործադրմամբ իրավական պետությունում ապահովվում է դատաինստիտուցիոնալ համակարգի ամբողջականությունը, հարաբերական անկախությունը, պաշտպանվածությունը՝ պետաիշխանական տարաբնույթ ներազդեցություններից, դինամիկ կայունությունը եւ այդ համակարգի կառուցվածքային տարրերի միջեւ փոխգործակցության ներդաշնակությունը:

Իրավական, ժողովրդավարական պետության պայմաններում դատական իշխանության ինստիտուցիոնալ համակարգի բնականոն գործունեության ապահովման, վերը հիշատակված, պայմանները տարաբնույթ ձեւակերպումներ են ստացել պետությունների սահմանադրություններում: Դրանք կարելի է դասակարգել ըստ հատկանիշի՝ ընդգծելու համար այն առանձնահատուկ սկզբունքները, կամ սահմանադրաիրավական պայմանները, որոնք կոչված են ապահովելու, հատկապես, դատական իշխանության գործառնական լիարժեքությունը պետական իշխանության համակարգում: Ինչպես պետական իշխանության յուրաքանչյուր ճյուղ, այնպես էլ դատական իշխանությունը, սահմանադրորեն պետք է կառուցված լինի հետեւյալ **ընդհանուր** սկզբունքներով.

1) դատական իշխանությունը պետք է հստակ **տարանջատված** լինի պետական իշխանության մյուս ճյուղերից.

2) դատական իշխանության կազմակերպման եւ գործունեության սահմանադրաիրավական հիմնական եւ կարեւորագույն սկզբունքներից է **անկախությունը**՝ (հարաբերական) պետական իշխանության մյուս (օրենսդիր եւ գործադիր) ճյուղերից.

3) իրենց լիազորությունների շրջանակներում, դատարանների ընդունած **որոշումները** (դատավճիռ, վճիռ, որոշում) **պարտադիր են** հասարակական տվյալ հարաբերության բոլոր սուբյեկտների համար:

Դատական իշխանությունը, միաժամանակ, կազմակերպվում է նաեւ սահմանադրաիրավական հետեւյալ **առանձնահատուկ** սկզբունքներով.

1) արդարադատությունն իրականացվում է **բացառիկության** սկզբունքով, այլ կերպ՝ արդարադատության իրականացումը դատական իշխանության մենաշնորհն է,

2) դատական իշխանությունը կազմակերպվում է **կազմակերպական-ինստիտուցիոնալ կուռ (հիերարխիկ, անկախ եւ գործառնական) համակարգով**՝ արդարադատական գործառույթի փուլային պարտադիր բաշխման (վերաքննման բազմաստիճանության) սկզբունքով.

3) արդարադատությունը, անհրաժեշտաբար, պետք է իրականացվի դատական իշխանության առջեւ դրված գործառույթային խնդիրների լիարժեք լուծման կարողության սկզբունքով՝ **ընդհանուր, վարչական եւ սահմանադրական արդարադատության բնագավառների պարտադիր ընդգրկմամբ**՝ անկախ վերջիններիս կառուցվածքային-ինստիտուցիոնալ խնդիրների լուծման որեւէ առանձնահատկության,

4) դատական իշխանությունը կառուցվում է արդարադատություն իրականացնող սուբյեկտի՝ **դատավորի, նկատմամբ առաջադրված որոշակի պարտադիր պահանջների եւ պայմանների բավարարման սկզբունքով** (տարիքային, մասնագիտական, աշխատանքային փորձի, վճարովի այլ

**ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ**

աշխատանքով զբաղվելու եւ այլ ցեւեր, ինչպէս նաեւ, անփոփոխելիութեան, անձեռնմխելիութեան, նյութական, պաշտոնավարման ժամկետի եւ այլ պայմաններ),

5) արդարադատութիւնն իրականացվում է **որոշակի եւ երաշխավորված պայմանների (սկզբունքների) պարտադիր առկայությամբ** (կոլեգիալութիւն, հասարակութեան ներկայացուցիչների մասնակցութիւն, հրապարակայնութիւն, արագութիւն, անկողմնակալութիւն, բանավորութիւն, մրցակցութիւն եւ այլն):

Վերոնշարկյալ հիմնական սկզբունքները ձեւավորվել են միջազգային պետաիրավական պրակտիկայում՝ դատարանակազմութեան հիմնահարցերի լուծման սահմանադրական երկարատեւ փորձի եւ տարբեր իրավահամակարգերում դրանց առանձնահատուկ գործադրման արդյունքում: Սակայն, ժամանակակից պայմաններում այդ սկզբունքներն անհրաժեշտ, բայց բավարար չեն քաղաքացիական զարգացած հասարակութեան աճող պահանջմունքներին համապատասխան դատախնամատուցիչոնալ համակարգի կենսագործունեութիւնն ապահովելու համար: Այն, ինչ փաստում է, օրինակ, Միացյալ Նահանգների դատարանակազմութեան դարավոր եւ ուսանելի փորձը, միանշանակ հանգեցնում է հետեւութեան, որ անհնար է պատկերացնել հասարակական զարգացման անհրաժեշտ մակարդակ առանց պետաիշխանական եւ մասնավորապէս՝ արդարադատական ինստիտուցիոնալ համակարգի մշտական եւ համակողմանի կատարելագործման: Հայաստանի Հանրապետութեան պարագայում, թերեւս, վաղ է խոսել դատարանակազմութեան միջազգային-իրավական ամենաբարձր չափորոշիչների Ֆասին, սակայն դրանց համակողմանի ուսումնասիրումը կօգնի հանրապետութիւնում դատաիրավական բարեփոխումների շրջանակներում իրականացնել ամենահրատապ եւ կիրառելի միջոցները, միաժամանակ պլանավորելով դատական իշխանութեան արդյունավետութեան բարձրացման սահմանադրաիրավական եւ օրենսդրական հետագա ուղիները:

Թերեւս ՀՀ-ում, ինչպէս եւ ժողովրդավարական զարգացման ուղի բռնած ցանկացած այլ պետութեան պայմաններում, դատական իշխանութեան, որպէս պետական իշխանութեան ինքնուրույն եւ տարանջատված ճյուղի, գործադրման արդյունավետութեան գլխավոր գրավականն այդ իշխանութիւնը կրող ինստիտուցիոնալ համակարգի գործունեութեան անկախութիւնն է՝ վերջինիս սահմանադրաիրավական եւ օրենսդրական լիարժեք անրապնդման, այդ անկախութեան երաշխիքների պարտադիր առկայութեան եւ դրանց անխախտելիութեան պայմաններում: Սակայն, ժողովրդավարական ժամանակակից համակարգերին բնորոշ բոլոր բնութագրիչներին համապատասխանելու դէպքում միայն

կարող է դատական իշխանությունը ՀՀ-ում հավակնություն ունենալ լինելու՝ իր ինստիտուցիոնալ խնդիրները լիարժեք եւ արդյունավետ իրականացնող պետական իշխանության ճյուղ, իսկ այդպիսին այդ իշխանությունը կարող է լինել, եթե այն կրող համակարգը՝ ա) ամբողջական է, բ) դրա կառուցվածքային տարրերի միջեւ առկա է ներդաշնակություն, գ) դինամիկ կայուն է, դ) հարաբերական անկախ է, ե) ունի համակարգային պաշտպանվածություն:<sup>1</sup>

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ ՀՀ դատական ներկայիս գործող համակարգը չի համապատասխանում վերոթվարկյալ եւ ոչ մի պայմանի, որն առաջին հերթին հետեւանք է իշխանությունների տարանջատման սկզբունքի անհետեւողական գործադրման եւ հանրապետության առջեւ ծառայած պետաիրավական խնդիրներին անհամապատասխան դատաինստիտուցիոնալ լուծումների: Արդյունքում.

1) Հայաստանի Հանրապետությունում գործող դատական համակարգն իր սահմանադրաիրավական եւ օրենսդրական կարգավիճակով բնավ չի համապատասխանում դատական իշխանության անկախության միջազգային չափանիշներին, այստեղից բխող բոլոր հետեւանքներով.

2) պետական իշխանության համակարգում դատական իշխանության գործառնական անհավասարակշռված դերի առկայության պայմաններում, մարդու սահմանադրական իրավունքների եւ ազատությունների պաշտպանության դատաինստիտուցիոնալ հնարավորությունն անլիարժեք է.

3) Հայաստանում դատական համակարգի կառուցվածքային եւ գործառնական խնդիրների օրենսդրական ոչ լիարժեք լուծումը հանգեցնում է արդարադատական գործառույթի անարդյունավետ իրականացմանը:

Միացյալ Նահանգների եւ մի շարք եվրոպական պետությունների դատական համակարգի զարգացման փորձը հանգեցնում է մի շարք հետեւությունների, որոնք, մեր կարծիքով, պետք է դիտարկել ՀՀ-ում դատաիրավական բարեփոխումների համատեքստում, որպես դատական համակարգի անկախության, ինստիտուցիոնալ արդյունավետ գործունեության ապահովման առաջնահերթություններ.

1) ՀՀ-ում դատական իշխանության, որպես պետական իշխանության ինքնուրույն եւ տարանջատված (օրենսդիր եւ գործադիր իշխանու-

<sup>1</sup> Ըստ ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ, իրավագիտության դոկտոր Գ.Հարությունյանի, պետական իշխանության ցանկացած համակարգ, այդ թվում նաեւ՝ դատականը, ժողովրդավարական պետության պայմաններում միջազգային չափանիշներով կենսունակություն ապահովելու համար պետք է համապատասխանի վերոհիշյալ պայմաններին:



**ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ**

թյուններից) ճյուղի անկախության երաշխավորման հիմնական նախապայմաններից մեկը «զսպումների եւ հակակշիռների» իրական եւ **հավասարակշռված** համակարգի սահմանադրաիրավական ամրագրումն է: ՀՀ գործող Սահմանադրությամբ դատական իշխանություն-օրենսդիր մարմին (ՀՀ Ազգային ժողով), գործադիր մարմին (ՀՀ կառավարություն) եւ ՀՀ Նախագահ ինստիտուցիոնալ հարաբերություններում, կարծում ենք, լրացուցիչ անհրաժեշտ է.

– սահմանադրորեն, որպես դատական իշխանության մենաշնորհ, նախատեսել **սահմանադրության, օրենքների եւ վավերացված միջազգային պայմանագրերի մեկնաբանման ինստիտուցիոնալ իրավունքը եւ պարտականությունը**, ընդ որում՝ սահմանադրության մեկնաբանումը դիտարկելով որպես սահմանադրական արդարադատության, իսկ օրենքների եւ վավերացված միջազգային պայմանագրերի մեկնաբանումը՝ ընդհանուր եւ հատուկ իրավագործության դատարանների խնդիր՝ անհրաժեշտաբար հստակեցնելով վերջիններիս թույլատրելի սահմանները.

– **դատական իշխանությանն առնչվող**, մասնավորապես՝ ֆինանսավորման (նաեւ՝ դատավորների նյութական եւ սոցիալական ոլորտին), կառուցվածքային եւ ինստիտուցիոնալ այլ խնդիրներին առնչվող **օրենքները, ենթաօրենսդրական ակտերը**, կարծում ենք, **ՀՀ Ազգային ժողովի, իրավասու պետական մարմինների կողմից, անհրաժեշտաբար, պետք է ընդունվեն համապատասխանաբար՝ կամ ՀՀ սահմանադրական դատարանի, կամ դատական իշխանության կառավարման հանրապետական մարմնի համապատասխան կարծիքի առկայության դեպքում,**<sup>2</sup>

– դատական իշխանություն-օրենսդիր մարմին զսպումների եւ հակակշիռների համակարգի ներդաշնակ գործադրումն ապահովելու նկա-

<sup>2</sup> ՀՀ դատարանների նախագահների խորհուրդն օրենքով իրեն վերապահված ներկայիս լիազորություններով դատական իշխանության կառավարման լիարժեք մարմին, մեր կարծիքով, դիտարկվել չի կարող:

Դատական իշխանությանն առնչվող օրենքների համաձայնեցման վերաբերյալ արված մեր առաջարկությունն անհրաժեշտ ենք համարում լրացուցիչ հիմնավորել հետեւյալ փաստարկներով. ՀՀ Սահմանադրության 55 հոդվածի 2-րդ կետով, 75, 78 հոդվածներով նախատեսված են որոշակի եւ, ինչպես վկայում է սահմանադրաիրավակիրառական պրակտիկան, միանգամայն արդյունավետ գործող զսպման եւ հակակշռման միջոցներ՝ ՀՀ Ազգային ժողով-ՀՀ Նախագահ, կառավարություն ինստիտուցիոնալ հարաբերություններում, որպիսիք գրեթե բացակայում են պետական իշխանության օրենսդիր, գործադիր ճյուղերի՝ դատական իշխանության հետ ունեցած հարաբերություններում: Ավելացնենք նաեւ՝ ՀՀ Սահմանադրության 75 հոդվածով կառավարությանը վերապահված օրենսդրական նախաձեռնության իրավունքը: Ուստի, կարծում ենք ՀՀ-ում սահմանադրական լրջ անհամամասնություն գոյություն ունի զսպումների եւ հակակշիռների համակարգի ներդաշնակ եւ հավասարակշռված գործադրումն ապահովելու խնդրում:

տառաւորներից ելնելով, կարծում ենք անհրաժեշտ է սահմանադրորեն նախատեսել ՀՀ Ազգային ժողովի ինստիտուցիոնալ մասնակցությունը դատական համակարգի ձեւավորման գործընթացին,<sup>3</sup>

– դատական իշխանություն-գործադիր մարմին (ՀՀ կառավարություն). ՀՀ Նախագահի ինստիտուցիոնալ հարաբերություններում զսպունգների եւ հակակշիռների համակարգի հավասարակշռություն ապահովելու նկատառումներից ելնելով կարծում ենք,

– անհրաժեշտ է դատարանների ֆինանսավորման (տարեկան եւ ընթացիք). դատական համակարգի մարմիններին ամրակցված պետական սեփականություն հանդիսացող գույքի կառավարման, դատական իշխանության մարմինների բնականոն գործունեությունն ապահովող բյուջետային միջոցների հատկացման եւ ծախսման հետ կապված ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության հիմնական գործառույթները սահմանադրորեն եւ օրենսդրորեն տրամադրել համապատասխանաբար՝ դատական իշխանության կառավարման հանրապետական մարմին, իսկ սահմանադրական արդարադատության գործառնական խնդիրների մասով՝ ՀՀ սահմանադրական դատարանին՝ վերջինիս մասին օրենքին համապատասխան՝ ապահովելու համար նաեւ իշխանությունների տարանջատման վերաբերյալ ՀՀ Սահմանադրության 5 հոդվածում ամրագրված սկզբունքի լիարժեք գործադրումը. միաժամանակ հատակեցնելով եւ սահմանազատելով ֆինանսատնտեսական ոլորտում ՀՀ կառավարություն-դատական կառավարման հանրապետական մարմին, ՀՀ սահմանադրական դատարան առնչությունները.

– վարչական արդարադատության սահմանադրաիրավական եւ օրենսդրական կարգավորմամբ, մեր կարծիքով, իրական նախադրյալներ կատեղծվեն գործադիր իշխանության ոլորտում, ինչպես նաեւ ՀՀ Նախագահի հրապարակած իրավական ակտերի առնչությամբ օրինականության ապահովման համար, որն անհրաժեշտ է ինչպես դատական իշխանության հակակշռող եւ զսպող, այնպես էլ՝ այդ իշխանության ընդհանուր գործառնական եւ ինստիտուցիոնալ դերն առավել լիարժեք դարձնելու նկատառումներով.

<sup>3</sup> ՀՀ դատական համակարգի ձեւավորման գործընթաց ասելով այստեղ նկատի ունենք մասնավորապես այդ համակարգը դատավոր-կադրերով ապահովելը՝ դատավորների բեկնածությունների հարցի բննարկումը, որը ՀՀ Ազգային ժողովի կողմից, մեր կարծիքով, կարող է իրականացվել, օրինակ, պատգամավորների ներկայացուցչական հանձնաժողովի կողմից՝ ՀՀ Սահմանադրությամբ եւ օրենքով նախատեսված կարգով ՀՀ արդարադատության խորհրդին տրված համաձայնության ձեւով:

ՀՀ դատական համակարգի ձեւավորմանը ՀՀ Ազգային ժողովի մասնակցություն գործող Սահմանադրությամբ նախատեսված է միայն սահմանադրական դատարանի առնչությամբ (տե՛ս ՀՀ Սահմանադրության 99 հոդվածը):

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԿԳԻՐ ♦ 4(21)2001

– ՀՀ Սահմանադրության 94 հոդվածում ամրագրված դրույթը՝ ՀՀ Նախագահի, որպես դատական մարմինների անկախության երաշխավորի վերաբերյալ, չի համապատասխանում իշխանությունների տարանջատման սահմանադրական սկզբունքին,

– կարծում ենք, արմատական վերանայման կարիք ունեն ՀՀ Նախագահի գլխավորած ՀՀ արդարադատության խորհրդի վերաբերյալ սահմանադրական, հետեւաբար նաեւ՝ օրենսդրական նորմերը,<sup>4</sup> նախ, առաջարկում ենք վերանայել խորհրդի կարգավիճակը, անհրաժեշտաբար ամրագրելով վերջինիս անկախությունը<sup>5</sup> եւ կազմավորումը պետական իշխանության երեք ճյուղերի ու ՀՀ Նախագահի համամասնական մասնակցությամբ, երկրորդ, առաջարկում ենք ամրագրել արդարադատության խորհրդի անդամների երկարաժամկետ պաշտոնավարում եւ գործառնական անկախություն, մեր համոզմամբ, արդարադատության խորհրդի անդամները չպետք է զբաղեցնեն պետական այլ պաշտոն, կատարեն վճարովի այլ աշխատանք, բացի զիտական, մանկավարժական եւ ստեղծագործական աշխատանքից, երրորդ, կարծում ենք անհրաժեշտաբար պետք է հստակեցվեն եւ սահմանազատվեն արդարադատության խորհրդի եւ դատական կառավարման հանրապետական մարմնի գործառնական խնդիրներն ու լիազորությունները, նախատեսվեն այդ մարմինների ինստիտուցիոնալ փոխհարաբերության սահմանները, մասնավորապես՝ դատավորների թեկնածությունների քննարկման, դատավորների խրախուսման, նրանց պատասխանատվության ենթարկելու, պաշտոնեական պիտանիության ու ծառայողական առաջխաղացման եւ այլ հարցերում, չորրորդ, վերանայման կարիք ունի նաեւ արդարադատության նախարարի գործառնական դերն արդարադատության խորհրդում, կարծում ենք, դատական համակարգի ձեւավորման, կադրային պիտանիության խնդիրները, ինչպես վկայում է Միացյալ Նահանգների փորձը, չպետք է լուծվեն առավելապես գործադիր իշխանության մարմնի նախաձեռնությամբ, այլ՝ պե-

ՍԱՀՄԱՆԱՐԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 4(21)2001 ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ

<sup>4</sup> Սույն աշխատանքում մեր առջեւ նպատակ չենք դրել ներկայացնելու ՀՀ արդարադատության խորհրդի բարեփոխումների ամբողջական հայեցակետ, այլ՝ նախանշելու այն հիմնական սկզբունքները, որոնց սահմանադրական եւ օրենսդրական ամրագրումն անհրաժեշտ ենք համարում դատական իշխանության անկախությունը լրացուցիչ երաշխավորելու իմաստով:

<sup>5</sup> Անօրինաչափ ենք համարում Արդարադատության խորհրդի գործունեությունը ՀՀ Նախագահի փաստացի անմիջական ենթակայության ներքո: Խորհրդի աշխատակազմը, ՀՀ Նախագահի 1998թ. օգոստոսի 5-ի թիվ 97 հրամանագրին համապատասխան, ՀՀ Նախագահի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանում է, որը նաեւ ՀՀ Նախագահի կարգադրություններով պլանային ստուգումներ է իրականացնում հանրապետության դատաբաններում (տե՛ս, օրինակ, ՀՀ Նախագահի 2001թ. մարտի 10-ի թիվ 798 կարգադրությունը):



տական իշխանության բոլոր թելերի եւ ՀՀ Նախագահի համամասնական մասնակցությամբ:

2) ՀՀ-ում դատական իշխանության անկախության սահմանադրաիրավական եւ օրենսդրական չափորոշիչների՝ **միջազգային չափանիշներին** համապատասխանության, տեսագործական վերլուծությունը մեզ հանգեցնում է հետեւյալ հիմնական հետետությունների.

– ըստ ՄԱԿ-ի կողմից ճանաչված միջազգային-իրավական սկզբունքների,<sup>6</sup> դատական իշխանության անկախությունն երաշխավորված համարել չի կարելի, եթե հստակ կանոնակարգված չէ դատավորին պաշտոնազրկելու պայմաններն ու կարգը, մասնավորապես, մեր համոզմամբ, ՀՀ-ում ընդունելի կլինե՞ր ԱՄՆ փորձի կիրառումը պաշտոնազրկման բազմափուլ ընթացակարգով՝ պետական իշխանության մյուս թելերի եւ առաջին հերթին՝ դատական իշխանության մարմինների ամենակատիվ ու համամասնական մասնակցությամբ, դրանով իսկ բացառելով կողմնակալության որեւէ դրսեւորում: Հայաստանի պարագայում ընդունելի կլինե՞ր *դատական կառավարման հանրապետական մարմին – Ազգային ժողով – արդարադատության խորհուրդ – ՀՀ Նախագահ* ինստիտուցիոնալ միասնությունը, այսինքն, մեր համոզմամբ, ՀՀ-ում դատավորին սահմանադրությամբ նախատեսված դեպքերում եւ օրենքով նախատեսված կարգով անկախությունից զրկելու եւ պաշտոնանկ անելու գործընթացում իշխանությունների տարանջատման սկզբունքի, զսպումների եւ հակակշիռների համակարգի գործադրման անհրաժեշտությունն ենթադրում է նաեւ, որ **օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանության մարմինները, ՀՀ Նախագահը**, ինչպես եւ դատական համակարգի ձեւավորման՝ մեր կողմից առաջարկված տարբերակում, **պետք է ունենան մասնակցության (հետաքննելու, եզրակացություններ տալու խնդիրներում) ինստիտուցիոնալ հավասար եւ համարժեք հնարավորություններ**,<sup>7</sup>

– մեր կարծիքով, ՀՀ-ում առանձնահատուկ պետք է կարելուրվի նաեւ դատավորների (նաեւ՝ օժանդակ անձնակազմի) մասնագիտական մշտական բարձրակարգ ուսուցման եւ որակավորման բարձրացման ապահովման խնդիրը, որպես նաեւ դատական իշխանության անկախության ա-

<sup>6</sup> Խոսքը վերաբերում է ՄԱԿ-ի 1985թ. եւ 1990թ. կոնֆերանսներում ընդունված՝ դատական մարմինների անկախության հիմնական սկզբունքներին:

<sup>7</sup> Անհրաժեշտ ենք համարում նշել, որ դատավորին պաշտոնազրկելու ընթացակարգում դատական իշխանության ինստիտուցիոնալ մասնակցությունն ապահովելու առաջին փորձն արված է ՀՀ գործող Սահմանադրության փոփոխությունների շրջանակներում, համաձայն որի առաջարկված է ՀՀ սահմանադրական դատարանին լիազորել օրենքով նախատեսված դեպքերում որոշում կայացնել դատավորի լիազորությունները դադարեցնելու մասին:

**ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ**

պահովման միջազգային-իրավական սկզբունք, ընդ որում, այդպիսի ուսուցումն օրենքով նախատեսված կարգով անհրաժեշտաբար պետք է լինի դատական իշխանության մենաշնորհը,<sup>8</sup>

– դատական իշխանության անկախության ապահովման միջազգային-իրավական կարեւորագույն նախապայմաններից մեկը այդ **իշխանության համակարգում կառավարման անկախ մարմնի ինստիտուցիոնալ պարտադիր առկայությունն է**, որի խնդիրն է օրենքով նախատեսված կարգով նպաստել դատական իշխանության մարմինների (դատարանների) կողմից արդարադատական գործառույթի անկախ, անկողմնակալ եւ բնականոն իրականացմանը: Որպես այդպիսին այն կարգավիճակով, որով նախատեսված է «Դատարանակազմության մասին» ՀՀ օրենքով, Դատարանների նախագահների խորհուրդը, մեր համոզմամբ, հանդես գալ չի կարող, քանի որ, *նախ*, հստակեցված չէ այդ խորհրդի ինստիտուցիոնալ դերը դատական իշխանության համակարգում, *երկրորդ*, օժտված չէ ներհամակարգային անկախությամբ, *երրորդ*, օրենքով այդ խորհրդին պատվիրակված գործառնական լիազորություններն անբավարար են դատական իշխանության կառավարման խնդիրները լիարժեք լուծելու համար: Ուստի, դատաիրավական բարեփոխումների շրջանակներում ՀՀ դատարանների նախագահների խորհրդի, որպես դատական իշխանության կառավարման հանրապետական մարմնի, ինստիտուցիոնալ դերը միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու նկատառումներից ելնելով եւ նկատի ունենալով նաեւ ամերիկյան փորձը, առաջարկում ենք.

– **սահմանադրորեն հստակեցնել** Դատարանների նախագահների խորհրդի կարգավիճակը եւ կազմը՝ սահմանելով, որ այն դատական իշխանության կառավարման հանրապետական անկախ մարմին է, որի լիազորություններն ու գործունեության կարգը սահմանվում է օրենքով,<sup>9</sup>

– պետական կառավարման մարմինների համակարգում խորհրդի, որպես դատական իշխանության կառավարման հանրապետական մարմնի, գործառնական ներդաշնակությունն ապահովելու անհրաժեշտությունից ելնելով, կարծում ենք, որ օրենքով պետք է նախատեսվի **խորհրդի կազմակերպական կառուցվածքը**, ստորաբաժանումների միջեւ հարաբե-

<sup>8</sup> Որպես այդպիսի ուսուցում կազմակերպող մարմին թերեւս կարող է հանդես գալ օրենքով նախատեսված դատական ուսուցման կենտրոնը՝ դատավարչական հանրապետական մարմին-դատական ուսուցման կենտրոն փոխհամագործակցության շրջանակներում:

<sup>9</sup> Նկատի ունենք ոչ թե «Դատարանակազմության մասին» ՀՀ օրենքի համապատասխան գլխի (5-րդ) վերաշարադրանք, այլ խորհրդի լիազորությունների եւ գործունեության առանձին օրենքով կարգավորում:

րակցության կարգն ու սկզբունքները,<sup>10</sup> գործառույթային առնչությունները, ինչպես նաև խորհրդի լիազորությունները՝ դատական իշխանության ֆինանսավորման, կադրային համալրման, այդ թվում՝ դատավորների նշանակման եւ պաշտոնագրկման բնագավառներում, ներհամակարգային օրինականության ապահովման եւ հսկողության, դատական պրակտիկայի ամփոփման եւ օրենսդրության կատարելագործման, դատաընթացակարգային ենթօրենսդրական ակտերի մշակման եւ հրապարակման, այդ ակտերի կատարման նկատմամբ հսկողություն իրականացնելու, դատական կադրերի (նաեւ՝ օժանդակ) մասնագիտական ուսուցման, որակավորման բարձրացման կազմակերպման, ներհամակարգային օժանդակ կադրերի պահանջարկի պլանավորման ուղղությամբ,<sup>11</sup> ինչպես նաև՝ պարտադիր առնչությունները ՀՀ արդարադատության խորհրդի, հանրապետական օրենսդիր եւ գործադիր մարմինների, ոչ պետական կազմակերպությունների (այդ թվում՝ դատավորների մասնագիտական միավորումների) հետ: Միաժամանակ կարծում ենք, օրենքով պարտադիր պետք է հաստատագրվի այն սկզբունքը, որ Դատարանների նախագահների խորհուրդը պետական բյուջեից ֆինանսավորվում է առանձին տողով:

3) ՀՀ-ում սահմանադրաիրավական եւ օրենսդրական լուրջ կատարելագործման կարիք ունեն նաև դատական իշխանության գործառնական լիազորությունները հատկապես մարդու սահմանադրական իրավունքների ու ազատությունների պաշտպանության բնագավառում: Մեր կարծիքով, այդ խնդրի լուծումն ունի ոչ միայն նեղ դատախնստիտուցիոնալ նշանակություն, այլև կոչված է այդ բնագավառում պետական իշխանության ճյուղերի միջև ապահովել գործառնական ներդաշնակություն, վերացնել այն անհավասարակշռությունը, որ գոյություն ունի մարդու սահմանադրական իրավունքների պաշտպանության արտադատարանական եւ դատական միջոցների միջև, ինչը հրատապ անհրաժեշտություն է նաև մարդու իրավունքների դատական պաշտպանության ներպետական ինստիտուցիոնալ ողջ համակարգը կատարելագործելու եւ Եվրոխորհրդի

<sup>10</sup> Կարծում ենք, որ խորհրդի աշխատակազմը, ի տարբերություն «Դատարանակազմության մասին» ՀՀ ներկայիս օրենքի 26 հոդվածում նախատեսված կարգի, պետք է ձեւավորվի եւ գործի ՀՀ վճռաբեկ դատարանից կամ պետական այլ մարմնից անկախ, գործառնական հստակ լիազորություններով:

<sup>11</sup> Իշխանությունների տարանջատման սահմանադրական սկզբունքի տեսանկյունից անտրամաբանական է օրինակ, ՀՀ կառավարության որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանի հաստիքային միավորների հաստատումը (տե՛ս ՀՀ կառավարության 1999թ. փետրվարի 24-ի թիվ 86 որոշումը):

Սահմանադրական արդարադատության ոլորտում համանման լիազորություններ, կարծում ենք, պետք է իրականացվի ՀՀ սահմանադրական դատարանի մասին օրենքին համապատասխան:



շրջանակներում մարդու իրավունքների եվրոպական դատարանի հետ արդյունավետ փոխգործակցություն ապահովելու առումներով:

Սահմանադրական արդարադատության հիմնական սկզբունքները, որոնք արմատավորված են ամերիկյան եւ նաեւ՝ միջազգային պրակտիկայում, դատաիրավական բարեփոխումների շրջանակներում անհրաժեշտաբար պետք է սահմանադրաիրավական եւ օրենսդրական հաստատագրում ստանան նաեւ Հայաստանում, այդպիսիք են.

– միջազգային-իրավական նորմերին համապատասխան մարդու իրավունքների ու ազատությունների սահմանադրաիրավական **առավել լիարժեք** ամրագրում.

– մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության բնագավառում սահմանադրական դատական վերահսկողության օբյեկտների, սուբյեկտների եւ իրականացման ձեւերի միջեւ **համապատասխանության** ապահովում, այդ վերահսկողության օբյեկտների եւ սուբյեկտների **շրջանակի ընդլայնում**, պայմանավորված առաջին հերթին՝ իրավական, ժողովրդավարական եւ սոցիալական պետության զարգացման անցումային խնդիրներով.

– մի կողմից ՀՀ ընդհանուր, հատուկ իրավագործության դատարանների, մյուս կողմից՝ ՀՀ սահմանադրական դատարանի, այդ դատարանների եւ պետական իշխանության մյուս մարմինների միջեւ **ինստիտուցիոնալ ներդաշնակ փոխգործակցության ապահովում**, մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում դատարանների եւ պետական մյուս մարմինների միջեւ գործառնական լիազորությունների հստակ **տարանջատում**:

4) Վերջապես, ՀՀ-ում արդարադատական գործառույթի իրականացման արդյունավետության վրա բացասաբար են ազդում **դատարան-հասարակություն** փոխգործակցական ակտիվ պրակտիկայի եւ՝ այդ փոխգործակցության սահմանադրաիրավական եւ օրենսդրական երաշխիքների համակարգի բացակայությունը, ինչպես նաեւ՝ **դատական համակարգի կառուցվածքային եւ գործառնական խնդիրների օրենսդրական անլիարժեք լուծումները**՝ ներհամակարգային ֆունկցիոնալ տարանջատման սկզբունքի խախտումը, որոնք հանգեցնում են նաեւ համակարգի կառուցվածքի եւ գործառնական լիազորությունների միջեւ անհամապատասխանության, համակարգի ինչպես գործառնական ամբողջականության, այնպես էլ՝ կառուցվածքային տարրերի միջեւ ներդաշնակության խախտման:

Դատարան-հասարակություն փոխգործակցական կապի զարգացումը ՀՀ-ում, մեր կարծիքով, պետք է կարեւորել ինչպես դատական իշխանության անկախության ամրապնդման, այնպես էլ՝ **դատական մարմինների նկատմամբ հասարակական վստահության արմատավորման**

տեսանկյունից: Գործող Սահմանադրության 91 հոդվածով նախատեսված երդվյալների ինստիտուտի կիրառման պրակտիկայի բացակայությունը ՀՀ-ում թույլ չի տալիս գործնական հարթությամբ մեկնաբանել դրա նպատակահարմարության եւ արդյունավետության խնդիրները, որով, թերեւս, պայմանավորված է նաեւ հասարակական կայուն կարծիքի բացակայությունն այդ ինստիտուտի գոյության անհրաժեշտության վերաբերյալ: Կարծում ենք, ՀՀ-ում ոչ այնքան կարեւոր է արդարադատության իրականացման արդյունավետության նկատմամբ հասարակական հսկողությունն ապահովել հատկապես երդվյալների միջոցով, այլ զարգացնել այդպիսի հսկողության եւ դատարան-հասարակություն փոխգործակցությունն ապահովող այլ ձեւեր, օրինակ, նահանգներում լայնորեն կիրառվող հասարակական տարաբնույթ կազմակերպությունների գործունեության պրակտիկան, որոնք ֆինանսավորման ոչ պետական միջոցների հաշվին եւ նահանգային օրենսդրության շրջանակներում ապահովում են արդարադատության արդյունավետության նկատմամբ հասարակական մշտական ակտիվություն՝ համագործակցելով նաեւ պետական իշխանության օրենսդիր եւ գործադիր իշխանության մարմինների հետ:

Օրինակ, Միացյալ Նահանգների դատական համակարգի գործունեության արդյունավետությունը մեծապես պայմանավորված է նաեւ համակարգի ներսում **արդարադատական գործառույթի այնպիսի բաշխմամբ, որի դեպքում առավելագույնս ապահովվում է արդարադատության արագ իրականացումը**,<sup>12</sup> իսկ համակարգի կառուցվածքում (ֆեդերալ եւ նահանգային մակարդակներով) հատուկ իրավագործության (կամ՝ սահմանափակ իրավագործության) դատարանների (հարկային, ընտանեկան, ժառանգության գործերով եւ այլն) առկայությամբ ապահովվում է արդարադատական գործառույթի մասնագիտացում, դատական պրակտիկայի արմատավորում եւ դատավորների արդյունավետ ուսուցման կազմակերպում, դատական սխալների կրճատում: Ուստի, մեր կարծիքով, ՀՀ-ում իրականացվող դատաիրավական բարեփոխումների շրջանակներում, *նախ*, անհրաժեշտ է, **արդարատության արագ եւ արդյունավետ իրականացումն ամրագրել որպես սահմանադրաիրավական սկզբունք**, որին պետք է անշեղորեն հետեւեն եւ՝ դատական մարմինները՝ արդարադատություն իրականացնելիս եւ թե՛ ՀՀ Ազգային ժողովը՝ օրինաստեղծ գոր-

<sup>12</sup> Արդարադատության արագ իրականացումը նաեւ այդ պետության Սահմանադրության պահանջն է (տե՛ս ԱՄՆ Սահմանադրության 6-րդ փոփոխությունը, որը վավերացվել է 1791թ. դեկտեմբերի 15-ին): ԱՄՆ դատական համակարգում գործառնական լիազորությունների բաշխման եւ դրանց սահմանների գոյության ներկայիս պայմաններում նվազագույնի է հասցված դատական գործերի շրջապտույտը եւ բողոքարկման հաճախականությունը (այդ մասին տե՛ս Want's Federal-State Court Directory, 1993 Edition):



ծունեություն իրականացնելիս: Օրենսդրական լուծումներով առաջարկում ենք.

– ՀՀ վերաքննիչ եւ վճռաբեկ դատարաններին լիազորել՝ առանձին դեպքերում, առաջին ատյանի կարգով, կոլեգիալ կազմով, իրականացնել արդարադատություն՝ կախված, օրինակ, քննվող գործերի բնույթից եւ դատավարության շահագրգիռ սուբյեկտներից.

– օրենքով առավել հստակ նախատեսել այն բացառիկ դեպքերը, երբ առաջին ատյանի դատարանի ակտը (վճիռը, դատավճիռը, որոշումը) կարող է վերաքննվել վերաքննիչ կամ վճռաբեկ դատարանում.

– հատուկ իրավագործության դատարանների վերաբերյալ ՀՀ Սահմանադրության 92 հոդվածում ամրագրված դրույթը, արդարադատության արդյունավետության բարձրացման նկատառումներից ելնելով, կարիք ունի օրենսդրական հետագա զարգացման՝ ըստ ՀՀ դատարանների կողմից քննվող առավել մեծ տեսակարար կշիռ ունեցող գործերի բնույթի եւ այդպիսի գործերով ընդհանուր իրավագործության դատարանների ծանրաբեռնվածության աստիճանի:

Հայաստանի Հանրապետությունում դատաիրավական բարեփոխումների շրջանակներում առաջարկվող լուծումները, մեր կարծիքով, առաջնահերթ են եւ արտահայտում են արդարադատական գործառույթի իրականացման արդյունավետության բարձրացման ամենահիմնական ուղիները: Մեր համոզմամբ, դատական իշխանության ինստիտուցիոնալ համակարգի հետագա կատարելագործման միջազգային ամենաբարձր ցուցանիշներ ապահովելու համար, անհրաժեշտ են համընդգրկուն բարեփոխումներ հասարակական, քաղաքական եւ սոցիալական կյանքի, գրեթե, բոլոր բնագավառներում, որոնք հասանելի կլինեն ՀՀ-ում տնտեսական հետագա աճի, քաղաքացիական հասարակության ձեւավորման, տարածաշրջանային հրատապ խնդիրների լուծման պայմաններում՝ էվրոպական ընկերակցության շրջանակներում տեղի ունեցող միասնականացմանը զուգընթաց:

4(21)2001

◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ